

Կենդանի, միջուկային Ինֆլուենզայի Պատվաստ Ինչ Պետք է Դուք Իմանաք 2009-10

Պատվաստի Մասին Շատ Տեղեկություններ Կան Իսպաներենով Եւ Այլ Լեզուներով: Տես www.immunize.org/vis:

1 Ինչո՞ւ պետք է պատվաստվեք:

Ինֆլուենզան (գրիպ - "flu") վարակիչ հիվանդություն է:

Դրա պատճառը ինֆլուենզայի մանրէն է, որը կարող է տարածվել հազի, փռչտալու կամ քթից արտահոսքի պատճառով:

Ուրիշ հիվանդություններ նույնպես կարող են նույն այխտանշանները ունենալ եւ հաճախ շփոթվել ինֆլուենզայի հետ: Բայց միայն ինֆլուենզայի մանրէի հարուցած հիվանդությունն է, որ կարող է իսկապես ինֆլուենզա առաջացնել:

Որքան մեկը կարող է ինֆլուենզայով վարակվել, բայց վարակի աստիճանը շատ բարձր է երեխաների մոտ: Մարդկանց մեծամասնության մոտ դա տեւում է ընդամենը մի քանի օր: Դա կարող է առաջացնել.

- տաքություն
- կոկորդի ցավ
- դող
- հոգնածություն
- հազ
- գլխացավ
- մկանների ցավ

Ունակը, ինչպես երեխաները, ծերերը եւ առողջական խնդիրներ ունեցողները, կարող են շատ ավելի ծանր տանել այս հիվանդությունը: Գրիպը կարող է բարձր ջերմություն եւ թոքաբորբ պատճառել, նաեւ առկա առողջական վիճակը ավելի բարդացնել: Երեխաների մոտ դա կարող է առաջացնել փորհարություն եւ ուշաթափություն: Միջին հաշվով, ինֆլուենզայի պատճառով տարեկան հոսպիտալացվում է 226,000 մարդ, որոնցից 36,000 մահանում են, մեծ մասամբ տարեց մարդիկ: **Ինֆլուենզայի պատվաստը կարող է կանխել ինֆլուենզան:**

2 Կենդանի, թուլացված ինֆլուենզայի պատվաստ – LAIV (քթանցքից ցողում)

Կա սեզոնային ինֆլուենզայի պատվաստի երկու տեսակ.

1. **Կենդանի, թուլացված ինֆլուենզայի պատվաստ (LAIV)**, որը պարունակում է կենդանի, բայց թուլացված (տկարացված) ինֆլուենզայի պատվաստ: Այն ցողվում է քթանցքի մեջ: 2. **Չակտիվացված ինֆլուենզայի պատվաստ**, որ երբեմն կոչվում է "գրիպի սրկում" սրկվում է մկանային ներարկումով:

Այս "սեզոնային" ինֆլուենզայի պատվաստները ձեւավորվել են կանխարգելելու համար տարեկան գրիպը: Դրանք չեն պաշտպանի համաճարակային H1N1 ինֆլուենզայի դեմ:

Չակտիվացված ինֆլուենզայի պատվաստի մասին նկարագրվում է առանձին Պատվաստի Տեղեկության Դայտարարության մեջ:

Ինֆլուենզայի մանրէները միշտ փոխվում են: Այս պատճառով ինֆլուենզայի պատվաստները ամեն տարի նորացվում են, եւ տարեկան պատվաստումը անհրաժեշտ է:

Ամեն տարի գիտնականները փորձում են պատվաստի մեջ եղած մանրէները համեմատել տվյալ տարում գրիպ պատճառելու հավանականությունն ունեցող մանրէների հետ: Եթե համապատասխանությունը մոտիկ է, ապա պատվաստը շատերին պաշտպանում է ինֆլուենզայի հետ կապված լուրջ հիվանդությունից: Բայց եթե նույնիսկ համապատասխանությունը մոտիկ չլինի, պատվաստը որոշ պաշտպանություն ունենում է: Ինֆլուենզայի պատվաստը չի կանխի այլ մանրէների պատճառած "ինֆլուենզայի տիպի" ուրիշ հիվանդություններ:

Պաշտպանությունը կնորոգի ներարկումից 2 շաբաթվա ընթացքում: Պաշտպանությունը տեւում է մեկ տարի:

LAIV-ը չի պարունակում թմբորգալ կոչվող կամ այլ պահպանիչներ:

3 Ովքե՞ր կարող են ստանալ LAIV:

LAIV-ը հանձնարարվում է **2-ից մինչեւ 49 տարեկան մարդկանց**, որոնք հղի չեն եւ որոնք առողջապահական որոշակի խնդիրներ չունեն (տես #4, Ներքեւում): Ինֆլուենզայի պատվաստ հանձնարարվում է այն անձանց, որոնք կարող են շատ վտանգաւոր ձեւով տարածել ինֆլուենզա, ինչպես.

- **Ընտանիքների հետ հարաբերողներ** եւ նորածնից մինչեւ 5 տարեկան երեխաներ եւ 50-ից բարձր տարիքի մարդկանց խնամողներ:
- Բժիշկներ, հիվանդապահներ, ինչպես նաեւ ընտանիքի անդամներ կամ որեւէ անձ, որ սերտ շփման մեջ է ծանր ինֆլուենզայի վտանգի տակ գտնվող մարդկանց հետ:

Առողջապահական խնամք մատակարարողները խորհուրդ են տալիս ինֆլուենզայի տարեկան պատվաստ ստանալ նաեւ այն մարդկանց, ովքեր.

- Մատակարարում են **եական համայնքային ծառայություններ:**
- Բնակվում են **հանրակացարաններում, ուղղիչ հաստատություններում կամ այլ բազմամարդ պայմաններում**՝ վարակումները կանխելու համար:

Ինֆլուենզայի պատվաստը հանձնարարվում է նաեւ որեւէ անձի, ով ցանկանում է **նվազեցնել ինֆլուենզայով հիվանդանալու կամ ուրիշների մոտ ինֆլուենզա տարածելու հավանականությունը:**

4 Որոշ մարդիկ պետք է LAIV ստանան:

LAIV-ը արտոնված չէ բոլորի համար: Դրա փոխարեն հետեւյալ մարդիկ պետք է ստանան **չակտիվացված** պատվաստ (գրիպի սրկում).

- **50 տարեկան կամ բարձր մեծահասակները կամ 6 ամսականից մինչեւ 2 տարեկան երեխաները:** (6 ամսականից փոքր երեխաները պետք է ստանան ինֆլուենզայի ոչ մի պատվաստ):
- 5 տարեկանից փոքր երեխաները, ովքեր ասթմա ունեն կամ նախորդ տարում մեկից ավելի անգամներ ունեցել են թոքերի խզոց:
- Մարդիկ, ովքեր առողջական երկարաժամկետ խնդիրներ ունեն, կապված՝
 - սրտի հիվանդության հետ
 - թոքերի հիվանդության հետ
 - ասթմայի հետ
 - երկամների կամ լյարդի հիվանդությունների հետ
 - նյութափոխանակության հիվանդության հետ, ինչպես շաքարախտի
 - սակավարյունության եւ արյան այլ հիվանդությունների հետ
- Մկանային կամ նյարդային որոշակի խնցրակում ունեցող որեւէ մեկը (ինչպես ուշաթափություն կամ ուղեղի կաթված), որոնք կարող են առաջացնել շնչառական կամ կուլ տալու խնդիրներ:
- Որեւէ մեկը, որ տկար իմունային համակարգ ունի:
- Երեխաները կամ մեծահասակները, ովքեր ասպիրինով երկարաժամկետ բուժման ընթացքի մեջ են:
- Հղի կանայք:

Ասեք ձեր բժշկին, եթե դուք երբեւէ ունեցել եք Guillain-Barré Սինդրոմ (ծանր անդամալուծող հիվանդություն, որ նույնպես կոչվում է GBS): Դուք հավանաբար կարող եք պատվաստը ստանալ, բայց ձեր բժիշկը պետք է օգնի ձեզ որոշում կայացնելու:

Գրիպի սրվումը նախընտրելի է այն մարդկանց համար (ներառյալ առողջապահական խնամք մատակարարողները եւ ընտանիքի անդամները), ովքեր մոտիկ շփման մեջ են *ծանրորեն թուլացած* իմունային համակարգ ունեցող որեւէ մեկի հետ (ով խնամք է ստանում պաշտպանված միջավայրում, ինչպես, օրինակ, ոսկրածուծի փոխպատվաստման բաժանմունքում)։ Մարդիկ, ովքեր անմիջական շփման մեջ են ավելի պակաս թուլացած իմունային համակարգ ունեցողների հետ (ներառյալ HIV ունեցողները), կարող են ստանալ LAIV:

Որեւէ մեկը, որ շնչառական խնդիրներ առաջացնելու աստիճան քթի լուրջ հարց ունի, ինչպես օրինակ, շատ խցանված քիթ, փոխարենը պետք է ստանա գրիպի սրվում:

Որոշ մարդիկ պետք է խոսեն իրենց բժշկի հետ նախքան ինֆլուենզայի պատվաստներից որեւէ մեկը ստանալը:

- Որեւէ անձ, որ երբեք ծանր այլերգիա է ունեցել ձվից կամ որեւէ այլ պատվաստի բաղադրությունից, կամ ինֆլուենզայի նախընթաց պատվաստի չափաբաժնից: *Այսքան ծեր բժշկին, եթե դուք ունեք որեւէ ծանր այլերգիա:*
- Մարդիկ, ովքեր չափավոր կամ ծանր հիվանդ են, սովորաբար պետք է սպասեն մինչեւ առողջանալը, նախքան պատվաստ ստանալը: Եթե դուք հիվանդ եք, խոսք ձեր բժշկի կամ հիվանդապահի հետ ձեր պատվաստումի թվականը փոխելու համար: Թեթեւ հիվանդություն ունեցող մարդիկ սովորաբար կարող են պատվաստ ստանալ:

5 Ես ե՞րբ պետք է ստանամ ինֆլուենզայի պատվաստ:

Դուք կարող եք պատվաստ ստանալ անմիջապես, երբ այն հասանելի է, սովորաբար աշնանը, եւ այնքան ժամանակ, քանի դեռ հիվանդությունը սովորաբար համայնքում: Ինֆլուենզան կարող է սկսվել որեւէ ժամանակ՝ նոյեմբերից մինչեւ մայիս ընկած ժամանակամիջոցում, բայց շատ հաճախ այն իր բարձրակետին է հասնում հունվարից մինչեւ փետրվար ընկած ժամանակահատվածում: Դեկտեմբերին, կամ նույնիսկ ավելի ուշ պատվաստում ստանալը դեռեւս օգտակար կլինեն մարդը տարվա համար:

Մարդկանց մեծամասնությունը կարիք ունի տարեկան միայն մի պատվաստի: **9 տարեկանից փոքր երեխաները, ովքեր պատվաստը ստանում են առաջին անգամ**, կամ ովքեր պատվաստը առաջին անգամ ստացել են նախորդ եղանակին ընդամենը մեկ չափաբաժնով, որպեսզի պաշտպանված լինեն, պետք է ստանան 2 չափաբաժին, նվազագույնը 4 շաբաթ տարբերությամբ:

Ինֆլուենզայի պատվաստ կարելի է կատարել այլ պատվաստների հետ միաժամանակ:

6 Ի՞նչ են LAIV-ի հետեւանքով առաջացած վտանգները:

Պատվաստը, որեւէ դեղի նման, հավանականությունը ունի առաջացնելու լուրջ խնդիրներ, ինչպես ծանր այլերգիկ ռեակցիաներ: Պատվաստի՝ ծանր վնաս կամ մահ առաջացնելու վտանգը չափազանց փոքր է:

Կենդանի ինֆլուենզայի պատվաստի մանրէները հազվադեպ են փոխանցվում մարդուց մարդ: Երբեք փոխանցվում են, ապա դրանք հիվանդություն պատճառելու հավանականություն չունեն:

LAIV-ը պատրաստված է տկարացված մանրէից եւ ինֆլուենզա չի առաջացնում: Պատվաստը կարող է թեթեւ ախտաանոցներ առաջացնել մարդկանց մոտ, ովքեր ստացել են այն (տես Ներքեւում):

Մեղմ խնդիրներ.

- 2-17 երեխաների եւ պատանիների մոտ գրանցվել են մեղմ ռեակցիաներ, ներառյալ.
 - հոսող քիթ, քթային արյունախիտում կամ հազ
 - տաքություն
 - գլխացավ եւ մկանային ցավեր
 - խոխոռոց
 - որովայնային ցավեր կամ երբեմն սրտխառնուք կամ փորհարություն

- 18-49 տարեկան մեծահասակների մոտ գրանցվել են.
 - հոսող քիթ կամ քթային արյունախիտում
 - կոկորդի ցավ
 - հազ, դող, հոգնածություն/թուլություն
 - գլխացավ

Բժշկական խնամք ապահովող(ներ)ին թույլատրելու համար պատվաստումների իրավիճակի վերաբերող ճշգրիտ տեղեկություն, պատվաստումների գնահատականներ եւ հետագա պատվաստումների առաջարկված գրաֆիկը, տեղեկությունները կուղարկվեն Michigan Care Improvement Registry (Միչիգանի խնամքի բարելավման գրանցման կենտրոն): Անհատներն իրավունք ունեն պահանջելու իրենց բժշկական խնամք ապահովողից, որպեսզի պատվաստումների տեղեկությունները գրանցման կենտրոն չուղարկվեն:

Ծանր խնդիրներ.

- Պատվաստի հետեւանքով կյանքին սպառնացող այլերգիկ ռեակցիաները շատ հազվադեպ են: Եթե դրանք պատահեն, դա կլինի ներարկումից ընդամենը մի քանի րոպեից մինչեւ մի քանի ժամվա ընթացքում:
- Եթե որեւէ արտադրանքի պարագայում հազվադեպ ռեակցիաներ են լինում, դրանք չեն կարող ճշտվել մինչեւ հազարավոր կամ միլիոնավոր մարդիկ չօգտագործեն այդ արտադրանքը: LAIV-ի միլիոնավոր չափաբաժիններ են առաքվել մարդկանց այն ժամանակից ի վեր, ինչ LAIV-ը օրինականացվել է, եւ ոչ մի լուրջ պրոբլեմ չի ճշտվել: Ինչպես մնացած բոլոր պատվաստները, LAIV-ը կշարունակի հսկողության տակ մնալ, որպեսզի անսովոր կամ ծանր հետեւանքներն ստուգվեն:

7 Ի՞նչ անել ծանր ռեակցիայի դեպքում:

Ես ինչի՞ վրա պետք է ուշադրություն դարձնեմ:
 Որեւէ անսովոր վիճակի, ինչպես բարձր տաքություն կամ վարքագծի փոփոխություն: Ծանր այլերգիկ ռեակցիայի նշաններ կարող են լինել ծանր շնչառությունը, խապտությունը կամ խոխոռոց, ցաները, գլխապտույտները, թուլությունը, սրտի արագ բաբախումը կամ գլխապտույտը:

- Ես ի՞նչ պետք է անեմ:**
- **Չանգեք** բժշկին, կամ տվյալ անձին անմիջապես բժշկի տարբե:
 - **Այսք** բժշկին ինչ է պատահել, դեպքի օրը եւ ժամանակը եւ պատվաստումը երբ է կատարվել:
 - **Խնդրեք** ձեր խնամատարին, որպեսզի ռեակցիայի մասին տեղեկագրի՝ լրացնելով Պատվաստի Զակագրեցության Դեպքերի Տեղեկագրման Զամակարգի (Vaccine Adverse Event Reporting System, VAERS) ձեւ: Կամ դուք կարող եք տեղեկագիրը գրանցել VAERS կայքում www.vaers.hhs.gov հասցեով կամ զանգահարել 1-800-822-7967 համարով:

VAERS-ը բժշկական խորհուրդներ չի մատակարարում:

8 Պատվաստի Վնասվածքի Փոխհատուցման Ազգային Ծրագիր

Գոյություն ունի դաշնակցային ծրագրի՝ վճարելու պատվաստից լուրջ ռեակցիա ունեցող մարդկանց խնամելու համար:

Պատվաստի Վնասվածքի Փոխհատուցման Ազգային Ծրագրի մասին (National Vaccine Injury Compensation Program) հավելյալ տեղեկությունների համար զանգահարել **1-800-338-2382** կամ այցելել www.hrsa.gov/vaccinecompensation կայքը:

9 Ինչպե՞ս կարող եմ ավելի տեղեկություն ունենալ:

- Զարգրեք ձեր խնամատարին: Երանք կարող են ձեզ տալ պատվաստի փաթեթի ներդիրը կամ առաջարկել տեղեկության այլ աղբյուրներ:
 - Չանգահարեք ձեր տեղական կամ նահանգային բաժանմունք: **1-888-767-4687**
 - Կապվեք Գիվանդությունների Կառավարման եւ Կանխարգելման Կենտրոնների հետ (CDC).
 - Չանգահարեք **1-800-232-4636 (1-800-CDC-INFO)** կամ
 - Այցելեք CDC-ի կայքը՝ www.cdc.gov/flu
- DCH-1237A
 AUTH: P.H.S., Act 42, Sect. 2126.



Vaccine Information Statement
 Live, Attenuated Influenza Vaccine (IMM778ARM - Armenian (8/11/09)) 42 U.S.C. §300aa-26
 Translated by Transcend Translations, Davis, CA www.transcend.net